ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հոկտեմբերի 2025թ. ՆՄՈ/941-Ա

ք. Արմավիր

«ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետով, 5-րդ մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի N12.9/12.9/24385-2025 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՀԿԴ/0167/01/25 քրեական գործով կայացված դատավճիռը.

որոշում եմ՝

1. Դադարեցնել «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Մանուկյանի լիազորությունները՝ վաղաժամկետ լուծելով նրա հետ 2022 թվականի փետրվարի 21-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**